# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

## կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

«Երևանի ավտոբուս» ՓԲԸ-ն ստորև ներկայացնում է իր կարիքների համար կուտակիչ մարտկոցի ձեռքբերման նպատակով կազմակերպված ԵԱ-ԷԱՃԱՊՁԲ-25/76 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2025 թվականի դեկտեմբերի 12-ին կնքված N ԵԱ-ԷԱՃԱՊՁԲ-25/76-1 ծածկագրով պայմանագրում 2026 թվականի փետրվարի 03-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի /համաձայնագրի/ պատճենը:

**Փոփոխության առաջացման պատճառ՝** գնման առարկայի ձեռքբերման համար «Երևանի ավտոբուս» ՓԲԸ-ի 2026 թվականի բյուջեով և գնումների պլանով ֆինանսական միջոցների նախատեսում:

**Փոփոխության նկարագրություն՝** «Երևանի ավտոբուս» ՓԲԸ-ի և «Արպանիվ» ՍՊԸ-ի միջև կնքված Պայմանագրի շրջանակում 2026 թվականի փետրվարի 03-ին կատարված փոփոխությունների արդյունքում.

- Հաստատվել է Պայմանագրի Հավելված N 3-ով ներկայացված «Վճարման ժամանակացույց»-ը համաձայն՝ Համաձայնագիր 2-ի Հավելված 1-ի:

**Փոփոխության հիմնավորում՝** 2025 թվականի դեկտեմբերի 12-ին կնքված N ԵԱ-ԷԱՃԱՊՁԲ-25/76-1 ծածկագրով պայմանագիրը կնքվել էր «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն, իսկ «Երևանի ավտոբուս» ՓԲԸ-ի կողմից ապրանքի ձեռքբերման պահանջը չի դադարել և ապրանքի ձեռքբերման համար «Երևանի ավտոբուս» ՓԲԸ-ի 2026 թվականի բյուջեով և գնումների պլանով նախատեսվել են ֆինանսական միջոցներ, որի արդյուքնում տեղի է ունեցել փոփոխություն նշյալ պայմանագրի մեջ, պահպանելով պայմանագրի 1.1, 8.5 և 8.15 կետերով սահմանված պահանջները:

Պատվիրատու՝ **«Երևանի ավտոբուս» ՓԲԸ**